# АРМЕНСКІЙ КАТЕХИЗИСЪ

Въ пользу Закавказскихъ Училищъ.

ТИФЛИСЪ.

Въ Типографіи И. и Д. Арзановыхъ.

1839.

22
4-94

3485 855-Կձ

# ԿՐԹՈՒԹԻՒ՛Ն

22
4-94
Կγ

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱ՛Ն

7214

280
2511-ԱՍ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

’Ի պէտս Հայաստանեայց սորին Ներսիսեանց։

1005
կ5026

’Ի Տփխիս։

2004

—

’Ի Տպարանի Յ. Ա. Դ. Արղութեանց։

1839։

28

Հաւանութեամբ Թեմական Առաջնորդի Հայոց Աստրախանի և Տայոց Տեառն Կարապետի։

# ԿՐԹՈՒԹԻՒՆ
## Աւետարանական:

### Հատուած առաջին:

Հրահանգք ՚ի բերան ուսուցչի:

### Ներածութիւն:

Հարց: Զի՞նչ է Կրթութիւնն Աւետարանական:

Պատ՛: Կրթութիւնն Աւետարանական է հրահանգ հոգևոր, որ վարժէ զմեզ ՚ի ճանաչումն ճշմարտութեանց, պարունակելոց յԱւետարանին Քրիստոսի:

Հ: Անուամբս Աւետարան՝ զի՞նչ իմանամք այսու:

Պ: Իմանամք զբովանդակ վարդապետութիւնն Քրիստոսական հաւատոյ:

Հ: Ո՞վ է վարդապետութեանդ հեղինակ:

Պ: Քրիստոս և Առաքեալք նորա:

Հ: Քրիստոս ո՞րպէս հրատարակեաց:

Պ: Բացայայտ բանիւք և օրինակօք ու-սուցանելով:

Հ: Ե՞րբ:

Պ: Յորժամ էր ՚ի վերայ երկրի:

Հ: Զիա՞րդ և Առաքեալք:

Պ: Առաքեալք բաց ՚ի ձայնիւ քարոզե-լոյ՝ տարածեցին զուսումն հաւատոյ և գրովք:

Հ: Վարդապետութիւնն Քրիստոսական հաւատոյ զի՞նչ ուսուցանէ:

Պ: զԱստուածպաշտութիւն:

Հ: Զի՞նչ է Աստուածպաշտութիւնն:

Պ: Ի փառաւորել զԱստուած արժա-նավայելուչ ծառայութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ:

Հ: զԱստուած զիա՞րդ արժան է պաշ-տել:

Պ: Ճշմարիտ հաւատով, հաստատուն յուսով և անկեղծ սիրով:

## Յօդուած առաջին:

### Հ ա ւ ա տ ք:

Հ: Ո՞ր ինչ են հաւատք:

Պ: Ճանաչել և ընդունել զճշմարտութիւնս վերաբերեալս առ Աստուած և առ Աստուածայինս:

Հ: Ուստի՞ առնումք զյայտնութիւն Աստուածային ճշմարտութեանց:

Պ: յԱստուածաշունչ գրոց. այն է՝ ի հին և ի նոր կտակարանաց:

Հ: զԱստուածային ճշմարտութիւնս չէ՞ մարթ ճանաչել և մտօք:

Պ: Մարթ է. զի են ինչ ինչ յԱստուածային ճշմարտութիւնս, զորս իմանամք և մտօք:

Հ: Ո՞յք եղեն գրողք կտակարանաց:

Պ: Գրողք հին կտակարանին՝ եղեն Մարգարէք. և նորոյն՝ Առաքեալք:

Հ: Վասն է՞ր անուանին Աստուածաշունչ:

Պ. Օր չնչմամբ. այլ ինքն՝ ապրմամբ Հոգւոյն Աստուծոյ գրեցան. և ոչ ըստ մարդկեղէն ուսման:

Հ: Ո՞ւր բովանդակին հաւատոյն ճշմարտութիւնքն:

Պ: Համառօտիւ ՚ի հանգանակի:

Հ: Ասա՛ զհանգանակն:

Պ: Հաւատամք ՚ի մի Աստուած. ՚ի Հայրն Ամենակալ՝ յԱրարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից: Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս. յՈրդին Աստուծոյ. ծնեալ յԱստուածոյ Հօրէ միածին. այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ. Լոյս ՚ի լուսոյ. Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ. ծնունդ, և ոչ արարած: Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով. որով էառ

զմարմին, զհոգի և զմիտ և զաստուածայինն՝ որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտապէս և ո՛չ կարծեօք։

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ 'ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին. յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս. Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալսն և բնակեցաւ 'ի սուրբսն։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական Եկեղեցի։ 'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ 'Ի յարութիւն մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս։

Հ։ 'Ի՞նչ հաւատալիք գ՛ն յայդմ Հանգանակի։

Պ. Ինն։

ա. Գոյութիւն և միութիւն Աստու-
ծոյ։

բ. Երրորդութիւն Աստուածային անձանց։

գ. Արարչագործութիւն Աստուծոյ և նախախնամութիւն։

դ. Մարմնաւորութիւն Աստուածոր-
դւոյն։

ե. Միւսանգամ գալուստ Նորա։

զ. Իջումն Հոգւոյն սրբոյ ի Յորդա-
նան։

է. Եկեղեցի Քրիստոսի և խոր-
հուրդք նորա։

ը. Յարութիւն մեռելոց։

թ. Վերջին դատաստան։

## Ա.

Գոյութիւն և միութիւն Աստուծոյ։

Հ. Աստուած կա՞յ նէ։

Վ: Մանաւանդ Աստուած՝ իմանամք զԱրարիչն եւ զԿառավար ընդհանուր տիեզերաց. որ թէ գոյ՝ հաւատամք. այլ զի՞նչ էն Նորա՝ անյայտ է մեզ:

Ա: Ուստի՞ գիտեմք թէ գո՛յ Աստուած:

Վ: Ի փորձոյ բնութեան մերոյ. ի քննութենէ արարածոց եւ ի յայտնութենէ սուրբ գրոց:

Ա: Գիտե՞ս զանունն Աստուծոյ:

Վ: Աստուած զանուանէ իւրմէ այսչափ ինչ եւ եթ յայտնեաց Մովսէսի յասելն՝ „ Ես եմ Աստուած որ Եմ:

Ա: Մեկնեա՛ զբանդ:

Վ: Այսինքն՝ Ես եմ՝ որ եմ ինքնագոյ անփոփոխ, անսկիզբն, անվախճան եւ այլն:

Ա: Մա՞րթ է յորջորջել զԱստուած եւ այլով անուամբ:

Վ: Այո՛. զի են եւ այլ բազում անուանք ի սուրբ գիրս ընծայեալք Աստուծոյ ըստ այլ եւ այլ գործոյ Նորա. զորօրինակ. Տէր. Ամենակալ եւ այլն:

Ա: Կա՞յ արդեօք եւ այլ Աստուած:

Պ: Ո՛չ. մի միայն է ճշմարիտ Աստուած էութեամբ:

Բ:

## Երրորդութեան Աստուածային անձանց:

Հ: Աստուածային անձինք քանի՞ են:

Պ: Երեք. բայց ՚ի միում Աստուածութեան:

Հ: Ասա զանուանս նոցա:

Պ: Առաջինն է և կոչի Հայր. երկրորդն՝ Որդի. և երրորդն՝ Հոգի Սուրբ:

Հ: Այդ վարդապետութիւն ո՞ւր ապացուցանի:

Պ: Որպէս հաւատալ ՚ի յայտնութենէ սուրբ գրոց:

Հ: Զանազանի՞ն երեք անձինք ՚ի միմեանց.

Պ: Այո՛ զանազանին անձնաւորութեամբ. զի այլ է անձն Հօր. այլ Որդւոյ. և այլ Հոգւոյն սրբոյ:

Հ: Բնութեամբ եւս զանազանի՞ն. կամ

Ե՞ն 'ի նոսա մեծ և փոքր:

Պ: Ո՛չ. զի են համաբուն, համագոյ, համակամ, համազօր և համափառ:

Հ: Գո՞ն 'ի նոսա յատկութիւնք:

Պ: Յատկութիւն իւրաքանչիւր անձին ճանաչի յանուանէ.

Հ: Որպէս:

Պ: Ո՛չ է և ո՛չ ասի Հայրն՝ Որդի կամ Հոգի. և ո՛չ Որդին՝ Հոգի կամ Հայր. որպէս և ո՛չ Հոգին՝ Հայր կամ Որդի:

Հ: Զիա՞րդ ևս:

Պ: Հայր չծնեալ և ծնօղ է. Որդին չծնօղ և ծնունդ է և Հոգին սուրբ ո՛չ ծնօղ և ո՛չ ծնունդ՝ այլ ելօղ:

Հ: Յումմէ՞ յառաջ գան Որդին և Հոգին սուրբ.

Պ: Որդին ծնունդ է 'ի Հօրէ. իսկ զՀոգւոյն սրբոյ ասաց Քրիստոս. Հոգին ճշմարտութեան 'ի Հօրէ ելանէ:

## Գ.

### Արարչագործութիւն և Նախախնամութիւն Աստուծոյ:

Հ: Զի՞նչ են Արարչագործութիւն և Նախախնամութիւն:

Պ: Այն ներգործութիւնք սրբոյ Երրորդութեանն առ արտաքս, որոց առաջնովն՝ գոյացան. և երկրորդաւն՝ պահպանեալ կառավարին ամենայն արարածք:

## Դ.

### Մարմնաւորութիւն Աստուածորդւոյն:

Հ: Մարմնաւորութիւն Աստուածորդւոյն ասելով՝ զի՞նչ իմանամք:

Պ: Իմանամք զմարդ եղանիլն Որդւոյ Աստուծոյ հաճութեամբ Հօր և Հոգւոյն սրբոյ:

Հ: Որդին Աստուծոյ յումմէ՞ էառ զմարդկութիւնն:

Պ: Առեալ ՚ի սրբոյ Կուսէն Մարիամայ

զկատարեալ մարդկային բնութիւն և միաւորեալ ընդ իւրում Աստուածութեանն՝ եղև Ճշմարիտ Աստուածամարդ։

Հ։ Զի՞նչ անուն կոչի Աստուածորդին զկնի մարդեղութեան։

Պ։ Յիսուս Քրիստոս կամ Մեսիայ։

Հ։ Յայտնեա՛ ինձ զնշանակութիւնս անուանցդ։

Պ։ Յիսուս՝ ՚ի Հայումս լի փրկիչ. իսկ Քրիստոս կամ Մեսիայ՝ օծեալ։

Հ։ Վասն է՞ր կոչի Օծեալ։

Պ։ Վասն լինելոյ իւր օծեալ ՚ի Հոգւոյն սրբոյ Քահանայապետ Ճշմարիտ, Թագաւոր յաւիտենական և Մարգարէ ՚ի վեր քան զամենայն Մարգարէս

Հ։ Ընդէ՞ր և Փրկիչ։

Պ։ Յաղագս փրկելոյ զոլոյ ազգի մարդկան. որ կայր ընդ դատապարտութեամբ վասն մեղացն Ադամայ։

Հ։ Զայդ փրկագործութիւն ի՞ւ կատարեաց նա։

Պ: Իւրով պհայրական տնտեսութեամբն և հեղմամբ սուրբ արեան իւրոյ:

Հ: Ո՞ինչ և ո՞յք են տնտեսութիւնքն:

Պ: Են այսպէս խորհուրդք մարդեղութեան նորա. որպիսի են ծնունդն, մկրտութիւնն, քարոզութիւնն, չարչարանքն, թաղումն, յարութիւնն և համբարձումն:

## Ե

### Միւսանգամ Գալուստ նորա:

Հ: Ո՞ր աղագաւ գալոց է Քրիստոս միւսանգամ յաշխարհ:

Պ: Որ ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս և ՚ի հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց:

Հ: Իսկ գալուստ նորա զիա՞րդ լինիցի:

Պ: Ահեղահրաշ տեսլեամբ և փառօք Աստուածութեան իւրոյ:

Հ: Ե՞րբ:

Պ: Երբեք ոչ յայտնեաց Քրիստոս. ուստի և ՚ի մեզ է անգիտելի:

## Զ.

### Իջումն Հոգւոյն Սրբոյ ՚ի Յորդանան։

Հ. Հոգին սուրբ ե՞րբ էջ ՚ի Յորդանան։

Պ. ՚Ի ժամանակի մկրտութեան Քրիս-տոսի ՚ի Յովհաննէ։

Հ. Որպէ՞ս։

Պ. Աղաւնակերպ երևմամբ։

Հ. Ի՞նչ վասն։

Պ. ՚Ի յայտնել զմեծութիւն փառաց Աստուածութեան Քրիստոսի, և ՚ի վկայել թէ նա է Ճշմարիտ որդի Աստուծոյ։

## Է.

### Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդ նորա։

Հ. Եկեղեցին Քրիստոսի զի՞նչ է։

Պ. Եկեղեցի Քրիստոսի ասելով՝ իմա-նամք աստէն զընդհանուր ընկերու-

թիւն Ճշմարիտ հաւատացելոց 'ի Քրիստոս:

Հ: Քանի՞ յատկութիւնս ունի Եկեղեցին Քրիստոսի:

Պ: Չորս. իբր զի՛ է մի, սուրբ, ընդհանրական և առաքելական:

Հ: Զի՞նչ են խորհուրդք Եկեղեցւոյ.

Պ: Են սրբազան ծէսք. այսինքն՝ գործողութիւնք, յորս 'ի ձեռն զգալի նշանակաց արժանապէս ընդունողաց՝ պարգևի յԱստուծոյ շնորհք:

Հ: Քանի՞ և ո՞յք են այսպիսի խորհուրդք:

Պ: Եօթն:

ա: Մկրտութիւն:
բ: Դրոշմ:
գ: Ապաշխարութիւն:
դ: Հաղորդութիւն:
ե: Ամուսնութիւն:
զ: Կարգ:
է: Օծումն հիւանդաց:

Հ: Զի՞նչ է Մկրտութիւնն:

Պ: Մկրտութիւնն է խորհուրդ, յորում 'ի լուանալ մարմնոյն ջրով՝ լուա-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922



ցեալ լինի հոգի հաւատացելոյն շնոր-հօք կամ արեամբն Քրիստոսի:

Հ: Յումմէ՞ եղաւ խորհուրդս այս:

Պ: ՚Ի Յիսուսէ Քրիստոսէ, որ պատուէր ետ Առաքելոցն գնալ և աշակերտել զամենայն հեթանոսս մկրտելով զնո-սա յանուն Հօր և Որդւոյ և Հո-գւոյն սրբոյ:

Հ: Զի՞նչ է դրոշմն:

Պ: Դրոշմն է խորհուրդ, յորում յօ-ծանիլ արտաքուստ օրհնեալ ան-դամոց մարմնոյ միւռոնաւ, պար-գևին հաւատացելոյն ներքին շնորհք Հոգւոյն սրբոյ:

Հ: Յումմէ՞ սահմանեցաւ խորհուրդդ այդ:

Պ: ՚Ի սրբոց Առաքելոց:

Հ: Զի՞նչ է Ապաշխարութիւնն:

Պ: Ապաշխարութիւնն է խորհուրդ, յորում հաւատացեալն ճշմարտիւ ապաշաւեալ զմեղս իւր և հայցեալ զթողութիւն նոյա ՚ի շնորհս ար-դեանցն Քրիստոսի՝ ընդունի զքա-ւութիւն մեղաց յԱստուծոյ ՚ի

3485
1005/20597

ձեռն խոստովանահօր։

Հ. Յումմէ՞ եղաւ խորհուրդս այս։

Պ. ՚Ի Յիսուսէ Քրիստոսէ Փրկչէ մերմէ, որ սկսաւ քարոզել և ասել. ապաշխարեցէ՛ք և զկնի յինքեան զիշխանութիւն թողութեան մեղաց աւանդեաց Առաքելոց իւր և ՚ի յաջորդս նոցա՝ ՚ի Հովիւս եկեղեցւոյ ասելով. Առէ՛ք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։

Հ. Զի՞նչ է Հաղորդութիւնն։

Պ. Հաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում հաւատացեալքն ընդ տեսակաւ սրբազան հացի՝ նոյն իսկ մարմնոյն Քրիստոսի և ընդ տեսակաւ գինւոյ՝ նոյն իսկ արեանն Քրիստոսի հաղորդի ՚ի թողութիւն մեղաց և ՚ի ժառանգութիւն յաւիտենական կենաց։

Հ. Ո՞վ է կարգադրիչ խորհրդոյս։

Պ. Յիսուս Քրիստոս Տէրն մեր, որ յերեկոյի մատնութեան իւրոյ ՚ի մահ յետ ընթրեացն ընդ Առաքելոց՝ գո-

հացաւ զՀօրէ Աստուծոյ. և զկնի աղօթիցն առեալ հաց՝ օրհնեալ բե-կեալ զայն 'ի մասունս և բաշխեալ ամենայն աշակերտացն իւրոց՝ ասաց. Առէ՛ք կերայք. այս է մարմին իմ. և ապա առեալ բաժակ գինեաւ բե-րոց օրհնեալ՝ ետ նոցա և ասէ. Արբէ՛ք 'ի դմանէ ամենեքին. զի այդ է ա-րիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղու 'ի թողութիւն մեղաց:

Հ: Զի՞նչ է ամուսնութիւնն:

Պ: Ամուսնութիւնն է խորհուրդ եկե-ղեցւոյ. յորում այրն և կինն աղօ-թիւք քահանայի և եկեղեցւոյն՝ ըն-դունին փոխադարձ համաձայնու-թեամբ իւրեանց զօրհնութիւն յԱստուծոյ:

Հ: Ո՞վ է սահմանադիր խորհրդոյս.

Պ: Նոյն Աստուած:

Հ: Զի՞նչ է կարգն կամ ձեռնադրու-թիւնն:

Պ: Կարգն կամ ձեռնադրութիւնն է խոր-հուրդ, յորում հաւատացեալն ընտ-րեալ յեկեղեցւոյ՝ ձեռնադրու-

թեամբ Եպիսկոպոսի նուիրի Հոգ-
ւով սրբով կատարել զխորհուրդս և
հովուել զհօտ Քրիստոսի:

Հ: Յումմէ՞ սահմանեցաւ խորհուրդս այս

Պ: Ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիս-
տոսէ, որ ընտրեաց զաշակերտս իւր
ի սրբազան կոչումն Առաքելութեան.
և նոքա կացուցեալ յեկեղեցիս զյա-
ջորդս իւրեանց յԵպիսկոպոսութիւն՝
հաստատեցին մշտաբար զխորհուրդ
քահանայութեան:

Հ: Զի՞նչ է օծումն հիւանդաց:

Պ: Օծումն հիւանդաց է խորհուրդ՝ յո-
րում հաւատացեալն անկեալ ի հի-
ւանդութիւն՝ օծութեամբ ի քահա-
նայէն իւղով՝ ընդունի զբժշկութիւն
և զթողութիւն մեղաց:

Հ: Ո՞վ է կարգադիր խորհրդոյս:

Պ: Հոգին սուրբ ի ձեռն Առաքելոյն
Յակոբայ. ,, Հիւանդանայցէ ոք
,, ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկե-
,, ղեցւոյն, և արասցեն ի վերայ նո-
,, րա աղօթս. օծցեն իւղով յանուն
,, Տեառն: Եւ աղօթքն հաւատովք

„փրկեսցէ զաշխատեալսն, և յարուս-
„ցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ իցէ
„գործեալ՝ թողցին նմա„:

Հ: Առ ժամանա՞կ մի աւանդեցան եկե-ղեցւոյ այս ամենայն խորհուրդք, թէ մշտնջենաբար:

Պ: Մշտնջենաբար. քանզի պատուիրէ Փրկիչն Առաքելոյն բանիւ: ՚Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք՝ զմահ Տեառն պատմեցէք, մինչև եկեսցէ նա. ու-րեմն հարկ ՚ի վերայ կայ եկեղեցւոյն կատարել զայնոսիկ մինչև ցմիւսան-գամ գալուստն ՚Քրիստոսի Աստու-ծոյ մերոյ:

Հ: Ո՞յք են կատարողք կամ սպասաւորք խորհրդոցդ:

Պ: Միայն կարգն տուեալ լինի յԵպիս-կոպոսէ. իսկ այլ միւս խորհուրդք կատարին թէ՛ ՚ի ձեռն Եպիսկոպոսի և թէ՛ ՚ի ձեռն քահանայի:

Հ: Այդ ամենայն խորհուրդք հարկաւո՞ր են իւրաքանչիւր ՚Քրիստոնէի:

Պ: Մկրտութիւնն, դրոշմն, ապաշխա-

րութիւնն և հաղորդութիւնն հարկաւորք են. իսկ մնացեալքն՝ ոչ ամենեցուն՝ այլ որոց կամք իցեն:

Հ. Ի խորհրդոցդ քանի՞ք ոչ կրկնին:

Պ. Երեքին այսոքիկ. մկրտութիւն. դրոշմ, և կարգ:

## Ը.

### Յարութիւն Մեռելոց:

Հ. Զի՞նչ է յարութիւնն մեռելոց:

Պ. Է՛ ներգործութիւն Աստուածային կարողութեան, որով մարմինք մեռելոց յարուցեալ՝ միաւորեսցին ընդ հոգւոց իւրեանց յաւուրն յետնում:

## Թ.

### Վերջին դատաստան:

Հ. Զի՞նչ է դատաստանն վերջին:

Պ. Է՛ արդարադատին դատողութիւն Յիսուսի Քրիստոսի, որով արդարք

հրաւիրեսցի՛ն յարքայութիւն երկնից. և մեղաւորք դատապարտեսցի՛ն ՚ի դժոխս:

Հ: Զի՞նչ է արքայութիւն երկնից:

Պ: Է՛ վիճակ երանաւէտ և մշտնջենաւոր հանգստեան պատրաստեալ յԱստուծոյ:

Հ: Զի՞նչ է դժոխքն:

Պ: Տարտարոս կամ սանդարամետն անդնդոց, ուր գոյ հուր անշէջ և տանջանք անտանելի և ամենայն աղէ-չարեաց յոր յաւիտեանս յաւիտենից տանջի՛ն դեւք և ամենայն մարդիկ դատապարտեցեալք:

## Յօդուած Երկրորդ:

## Յ ո յ ս:

Հ: Յոյսն զի՞նչ է:

Պ: Է՛ ակնկալութիւն ժառանգութեան հանդերձեալ բարեաց, զորս խոստացեալ է Աստուած:

Հ: Ո՞ր են խոստացեալ բարիքն:

Պ։ Սեանք, հանգիստ և երանութիւն ա՛ն լռեճա՛ն։

Հ։ Աստուած ո՞րպէս խոստացաւ զայդոսիկ։

Պ։ Բերանովք մարգարէից. այլ յայտնագոյն՝ ի ձեռն որդւոյ իւրոյ Յիսուսի Քրիստոսի։

Հ։ Քրիստոս ե՞րբ յայտնեաց զխոստմունսդ։

Պ։ Ի քարոզութեան իւրում մինչ էր ի վերայ երկրի. և մանաւանդ ի վարդապետելն զերանութեանց։

Հ։ Երանութիւնքն՝ տուեալք ի Քրիստոսէ՝ քանի՞ են և ո՞յք։

Պ։ Գլխաւորքն են ինն այսոքիկ։

ա ։ Երանի աղքատաց հոգւով։
բ ։ Երանի սգաւորաց։
գ ։ Երանի՛ հեզոց։
դ ։ Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան։
ե ։ Երանի՛ ողորմածաց։
զ ։ Երանի՛ այնոցիկ, որ սուրբ են սրտիւք։
է ։ Երանի՛ խաղաղարարաց։

Ը ։ Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան։

Թ ։ Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ վասն իմ։

# Օրէնք Աստուծոյ

## Սէր ։

Հ։ Սէրն՝ որ առ Աստուած՝ զի՞նչ է։

Պ։ Է՛ այնպիսի զգացումն հոգւոյ, որով սիրեմք զԱստուած ըստ որում բուն բարութիւն և վերջին վախճան մեր։

Հ։ Զի՞նչ պահանջէ ՚ի մէնջ սէրն Աստուծոյ։

Պ։ Կատարել զօրէնս Աստուծոյ։

Հ։ Աստուածային օրէնք զի՞նչ են։

Պ։ Են կանոնք Աստուածադիրք, որ հրամայեն ո՛չ միայն չգործել զչար, այլ և առնել զբարի։

Հ։ ՚Քանի՞ են տեսակք օրինաց։

Պ։ Երկու. բնական Աստուածային և գրական Աստուածային։

Հ։ Ո՞ր է բնականն։

Պ։ Ծանուցողական գրութիւն մտաց կամ խղճի, որով կարեն մարդիկ ընտրող լինել բարւոյ և չարի։

Հ։ ’Ի բնական օրինաց զի՞նչ ինչ յառաջ եկին։

Պ։ Ամենայն քաղաքական և դատաստանական օրէնք և կանոնք հաստատեալք ’ի թագաւորաց կամ իշխանաց։

Հ։ Պարտաւորի՞մք հնազանդիլ և քաղաքական օրինաց։

Պ։ Այո՛ որպէս Աստուծոյ հրամանի։

Հ։ Ո՞ր է գրականն։

Պ։ Գրական ասին այն ամենայն օրէնք, որք տուան յԱստուծոյ գրովք։

Հ։ ’Ի քանի՞ս բաժանին։

Պ։ Յերկուս ’ի հին և ’ի նոր։

Հ։ Ո՞ր է հինն։

Պ։ Հին անուանին օրէնքն, զոր ետ Աստուած ձեռամբ մարգարէին Մովսէսի ’ի Սինայ լերին։

Հ: Հին օրէնք 'ի քանի՞ տեսակս բաժանէին:

Պ: Յերիս. 'ի բարոյականս, 'ի ծիսականս և 'ի դատաստանականս:

Հ: Այդքիկ օրէնք տևե՞ն ցարդ ևս:

Պ: Բարոյականքն տևեն. իսկ այլք որոց հետև լոկ օրինակք էին Աւետարանի 'ի գալ Քրիստոսի խափանեցան:

Հ: Ո՞ր են բարոյականքն:

Պ: Տասն պատգամքն. գրոշմեալք յերկուս քարեղէն տախտակս:

Հ: Ասա՛ զպատգամսդ:

Պ: ա : Մի՛ եղիցին քեզ այլ Աստուածք բաց յինէն:
բ : Մի՛ արասցես կուռս:
գ : Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քոյ 'ի վերայ սնոտեաց:
դ : Յիշեա՛ սրբել զօր շաբաթու:
ե : Պատուեա՛ զհայր քո և զմայր:
զ : Մի՛ սպանաներ:
է : Մի՛ շնար:
ը : Մի՛ գողանար:
թ : Մի՛ սուտ վկայեր:
ժ : Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ:

Հ: 'Ի պատգամսդ զի՞նչ պատուիրի մեզ:

Պ: 'Ի չորս առաջինսն՝ ցուցանին պարտաւորութիւնք մեր առ Աստուած. և 'ի վեց յետինսն՝ պարտաւորութիւնք մեր առ մերձաւորս:

Հ: Ո՞ր են նոր օրէնք:

Պ: Նոր օրէնք իմանին աստ բովանդակութիւն Քրիստոսական պատուիրանաց:

Հ: Պատուիրանք Քրիստոսի յի՞նչ կրթեն զմեզ:

Պ: Հրամայեն ունել զայն ամենայն առաքինութիւնս՝ որ երջանիկ կացուցանեն զմեզ աստ և 'ի հանդերձեալն և խորշել 'ի մոլութեանց կամ 'ի մեղաց թշուառացուցչաց հոգւոյ և մարմնոյ մերոյ:

Հ: Տեսակք մեղաց քանի՞ են:

Պ: Երկու. սկզբնական և ներգործական:

Հ: Ո՞ր է սկզբնական ասացեալն:

Պ: Այն՝ որով մեղուցեալ սկզբնա-

մարդոյն Աստուծոյ՝ ներքոյ անկա-
դատապարտութեան ինքն և ամենայն
Աստուածայինս բնութիւն:

Հ: Ո՞ր են ներգործական մեղք:

Պ: Ներգործական են այն ամենայն մեղք, զորս մեղանչեմք զկնի մկրտութեան:

Հ: Ո՞ր են դեղք այսոցիկ մեղաց:

Պ: Սկզբնականին դեղ՝ է մկրտութիւնն. իսկ ներգործականին՝ ապաշխարութիւնն:

Հ: Ներգործական մեղք զի՞արդ բաժանին:

Պ: Բաժանին ՚ի մահու չափ և ներելի:

Հ: Գլխաւորք ՚ի մոլութեանց կամ ՚ի մեղաց քանի՞ են:

Պ: Եօթն:

ա: Հպարտութիւն:
բ: Նախանձ:
գ: Բարկութիւն:
դ: Ծուլութիւն:
ե: Ագահութիւն:
զ: Որկրամոլութիւն:

Է ։ Բղջախոհութիւն։

Հ։ Որո՞վ առաքինութեամբ մարթ է բուժել զախտն հպարտութեան։

Պ։ Խոնարհութեամբ։

Հ։ զՆախանձո՞ւն։

Պ։ Եղբայրսիրութեամբ։

Հ։ զԲարկութեա՞նն։

Պ։ Հեզութեամբ և Համբերութեամբ։

Հ։ զԾուլութեա՞նն։

Պ։ Արիութեամբ։

Հ։ զԱգահութեա՞նն։

Պ։ Առատաձեռնութեամբ և Ողորմածութեամբ։

Հ։ զՈրկրամոլութեա՞նն։

Պ։ Բարեխառնութեամբ, որ է չափաւորութիւն յըմպ և 'ի կեր։

Հ։ զԲղջախոհութեա՞նն։

Պ։ Ողջախոհութեամբ և աղօթիւք։

Հ։ Զի՞նչ է աղօթքն։

Պ: Աղօթք այն պատշաճաւոր հայցուածք մարդոյ յԱստուծոյ:

Հ: Ո՞րպէս արժան է աղօթել:

Պ: Արտեւանդն սրտիւ, խորին ուշադրութեամբ եւ սերտ հաւատով:

Հ: Ո՞ւր եւ ե՞րբ պարտ է աղօթել:

Պ: Կա՛մ յեկեղեցւոջ. այսինքն՝ ’ի տաճարի ընդ այլոց. եւ կա՛մ առանձինն ’ի սենեկի յոր եւ իցէ ժամանակի ’ի ստիպել ջերմեռանդութեան:

Հ: Տա՞յ Աստուած զոր ինչ եւ խնդրիցեմք:

Պ: Տայ՝ եթէ խնդիրք մեր իցեն զհարկաւորայ հոգւոյ եւ մարմնոյ մերոյ:

Հ: Ո՞ր է գլխաւորն յաղօթս:

Պ: Տէրունեանն, զոր ուսոյց Տէրն մեր Քրիստոս:

Հ: Ասա՛ զաղօթսդ:

Պ: Հայր մեր՝ որ յերկինս ես:
Սուրբ եղիցի անուն քո:
Եկեսցէ արքայութիւն քո:
Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։
Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։
Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն։
Այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէն։
Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Հ։ Մասունք աղօթիցս քանի՞ են։

Պ։ Երեք. յառաջաբանութիւն. հայցուածք եօթն և վերջաբանութիւն։

Հ։ Ասա՛ զյառաջաբանութիւնն հանդերձ մեկնութեամբ նորա։

Պ։ Հայր մեր՝ որ յերկինս ես։ Այսինքն ուսուցանէ մեզ Տէրն մեր Քրիստոս յաղօթելն՝ մատչիլ առ Աստուած առանց երկիւղի իբրև զաւակք որդեգրեալք շնորհօք առ հայր որդեսէր։

Հ։ Որպիսի՞ է առաջին հայցուածն և զի՞նչ զօրութիւն նորա։

Պ։ Սուրբ եղիցի անուն քո։ Այսինքն՝ Աստուած մեր. առաքեա՛ առ մեզ զօգնութիւն քո զի բարեպաշտութեամբ վարեսցուք զկեանս մեր, որով

փառաւորի անուն քո. հեռացո՛ զմեզ 'ի մեղաց և յարատոյ, դարձո՛ զանհաւատս 'ի գիտութիւն Ճշմարտութեան քո և զանօրէնս 'ի ճանապարհ առաքինութեան, զի ընդ ամենայն տեղիս փառաւորեսցի անուն քո։

Հ։ Ո՞րպիսի է երկրորդ հայցուածն և զի՞նչ միտք նորա։

Պ։ Եկեսցէ արքայութիւն քո։ Այս է Հա՛յր մեր յետ կարճօրեայ կենացս մերոց հաղո՛րդս արա զմեզ բարեաց քոց 'ի քում՝ երկնից արքայութեան։

Հ։ Ո՞րպիսի է երրորդ հայցուածն և զի՞նչ զօրութիւն նորա։

Պ։ Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. Այս է՝ տո՛ւր մեզ այնպէս կատարել զկամս քո յերկրի, որպէս կատարեն հրեշտակք 'ի յերկինս։

Հ։ Ո՞րպիսի է չորրորդ հայցուածն և զի՞նչ իմաստ նորա։

Պ։ զՀաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Այսինքն՝ Հա՛յր՝ մի՛ զրկեր զմեզ 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր կերակրոյ նախ՝ 'ի չնորհաց քոց. 'ի

հաղորդութենէ խորհրդոյ Քրիստոսի քո և ապա՝ յերկրաւորս բարեաց հարկաւորաց առ դարման կենաց։

Հ։ Որպիսի՞ է հինգերորդ հայցուածն և զի՞նչ մեկնութիւն նորա։

Պ։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. այսինքն՝ կամի ասել։ Հա՛յր մեղաք առաջի քո՛. թո՛ղ մեզ զմեղս մեր այնպէս՝ որպէս և մեք ներեմք զըրկանաց կրեցելոց ՚ի մերոց նմանեաց։

Հ։ Որպիսի՞ է վեցերորդ հայցուածն և զօրութիւն նորա։

Պ։ Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այսինքն՝ Հա՛յր ազատեա՛ զմեզ ՚ի վտանգից և ՚ի փորձութեանց ժամանակաւոր աշխարհիս. կամ գոնէ մի՛ առաքեր առ մեզ զփորձութիւնս՝ վերագոյնս քան զկար մեր. որպէս զի անյողդողդ մնասցեն յոյս մեր առ քեզ և հաւատք։

Հ։ Որպիսի՞ է եօթներորդ հայցուածն և զի՞նչ իմաստ նորա.

Վ: Եւ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ: Այս է. զերծո՛, պահպանեա՛ զմեզ ՚ի յաւիտենական տանջանաց և ՚ի մասնակցութենէ Սատանայի:

Հ: Ո՞րպիսի է վերջաբանութիւն տէրունական աղօթիցս և զի՞նչ զօրութիւն նորա:

Վ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն: Այսինքն՝ Հա՛յր. դու գոլով ամենակարող՝ ընկա՛լ զաղօթս մեր, կատարեա՛ զհայցուածս մեր և քեզ տացուք փառք այժմ և յաւիտեանս:

Հ: Ո՞րոյ ես սահմանեալ աղօթք առ Սուրբ Կոյսն Աստուածածին:

Վ: Այո՛ գոյ:

Հ: Ասա՛ զի լուայց:

Վ: Անկանիմք առաջի քո Տիրամայր Սուրբ Աստուածածին. և աղաչեմք զանարատ զԿոյսդ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց և աղաչեա՛ զՄիածին Որդիդ փրկել զմեզ ՚ի փորձութենէ, և յամենայն վտանգից մերոց:

Հ: Ա՛սա և զպահպանողական աղօթս առ սուրբ խաչն Աստուածընկալ:

Պ: Պահպանեա՛ զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո 'ի խաղաղութեան. փրկեա՛ յերևելի և յաներևութ թշնամեաց. արժանաւորեա՛ զգոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս:

Հ: Ո՞ր է վերջաբան ուսման Ճշմարիտ Աստուածապաշտութեան:

Պ: Այս. յԱստուծոյ երկնի՛ր, և զպատուիրանս նորա պահեա՛:

## Յաւելուած:

Յաղագս տիեզերական ժողովոց:

Հ: Զի՞նչ են տիեզերական ժողովքն:

Պ: Տիեզերական կամ ընդհանրական ժողով ասելով՝ իմանամք զգումարիլն Հովուաց և Վարդապետաց եկեղեցւոյ յոր և իցէ տեղի առ 'ի բառ-

նալ զտարաձայնութիւնս ՚ի դաւա-
նութեան։

Հ։ Ո՞ւստի սկսանին այսոքիկ տիեզերա-
կան ժողովք։

Պ։ յԱռաքելոց անտի, որք զտարաձայ-
նութիւնս Հրէից ընդ նորընծայ հե-
թանոսաց ՚ի Քրիստոնէից յաղագս զհետ
երթալոյ աւանդութեանց հնոց ուխ-
տի ժողովեալ յԵրուսաղէմ՝ միաբան
խորհրդով լուծին և սահմանեցին
ազատ լինել ՚ի Քրիստոնէից յայնցանէ։

Հ։ ՚Քանի՞ են տիեզերական ժողովքն։

Պ։ Եօթն, յորոց Հայք ընդունին զերիս
միայն՝ զ՚Նիկիոյն, զԿոստանդնուպօլսոյ
զառաջինն և զԵփեսոսի։

Հ։ Ե՞րբ և վասն է՞ր եղև առաջին ժո-
ղովն տիեզերական։

Պ։ Յամի Տեառն 325 առ կայսերու-
թեամբ Կոստանդիանոսի մեծի ՚ի
՚Նիկիայ։ Գումարութեամբ 318 Հայ-
րապետաց որոց դատապարտեցաւ
աղանդն Արիոսի՝ որ ուսուցանէր ո՛չ
դաւանել զՅիսուս ՚Քրիստոս Աս-
տուած, և յօրինեցաւ Հանգանակն

հաւատոյ:

Հ: Ո՞ր և վասն է՞ր եղև երկրորդ ժողովն տիեզերական:

Պ: Յամի Տեառն 381 առ Կայսերութեամբ Թէոդոսի մեծի ՚ի Կոստանդնուպօլիս: Ժողովմամբ 150 հայրապետաց սրբոց դատապարտեցաւ աղանդն Մակեդոնի. որ ուրանայր զԱստուածութիւն Հոգւոյն սրբոյ և սահմանեցաւ դաւանել զնա համապատիւ Հօր և Որդւոյ:

Հ: Ո՞ր և վասն է՞ր եղև երրորդ ժողովն տիեզերական:

Պ: Յամի Տեառն 431 առ Կայսերութեամբ Թէոդոսի փոքու յԵփեսոս քաղաքի: Ժողովմամբ 200 հարց սրբոց դատապարտեցաւ աղանդն Նեստորի՝ որ ուսուցանէր դաւանել ՚ի Քրիստոս զերկու դէմս կամ զերկուս անձնաւորութիւնս ՚ի միում բնութեան. և հաստատեցաւ խոստովանել ՚ի մի անձն նորա զԱստուածային և զմարդկային բնութեանցն զմիաւորութիւն:

Հ: Ո՞ր և վասն է՞ր եղև չորրորդ ժողովն:

Պ: Յամի Տեառն 453'ի Քաղկեդոն ու Կայսրութեամբն Մարկիանոսի գումարութեամբ 600 Հարց, որք դատապարտեցին զաղանդն Եւտիքականաց զմի չփոխեալ բնութիւն 'ի Քրիստոս քարոզողաց:

Հ: Ո՞ւր և վասն է՞ր եղև հինգերորդ ժողովն:

Պ: Յամի Տեառն 553. 'ի Կոստանդնուպօլիս 'ի ժամանակս Յուստինիանոսի Կայսեր: Ժողովեալ 165 Հարց դատապարտեցան մոլութիւնքն Որոգինեայ և հաստատեցան ամենայն կանոնք առաջնոյ ժողովոյ:

Հ: Ո՞ւր և վասն է՞ր եղև վեցերորդ ժողովն:

Պ. Յամի Տեառն 680. 'ի Կայսրութեան Կոստանդիանոսի Պոգոնատի 'ի Կոստանդնուպօլիս Ժողովեալ 170 Հարց դատապարտեցաւ աղանդն միականագաւանից՝ որք ուսուցանէին դաւանել 'ի Քրիստոս զմի կամս միայն ըստ Աստուածութեանն:

Հ: Ո՞ւր և վասն է՞ր եղև եօթներորդ ժողովն:

Գ։ Յամի Տեառն 787 առ Կայսերու-թեամբ Կոստանդիանոսի փոքու ՚ի Նիկիա։ Գումարութեամբ 367 Հարց դատապարտեցաւ աղանդն պատկերա-մարտից և հաստատեցաւ յարգութիւն պատկերաց։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI · 1922
имени А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՎԱԽՃԱՆ։

Կամի՞ս զի հնազանդ լիցի քեզ որդին (քո) ուսմամբ գրոց սնո՛ (զնա), և մի՛ անելորդ համարիցիս նմա լսել Աստուածեղէն գրոց . . . և մի՛ ասիցես. մի՞թէ վանական առնիցեմ զնա. ո՛չ ասեմ վանական, այլ Քրիստոնեայ արա՛։ (Ոսկեբեր. ՚ի Մեկնութեան Մարկոսի Ժ. 16.)

2.